ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

19 ԱՊՐԻԼԻ, 2016 թ.
№ 5 (990)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 50 -րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ՄԵՐ ԽԱՂԱՂ ԱՌԱՎՈՏՆԵՐԻ ՊԱՀԱՊԱՆՆԵՐԸ

Ապրիլի 1-ից 4-ը ղարաբաղա-ադրբեջանական սահմանի ողջ շփման գծում ընթանում էին թեժ մարտեր: Ադրբեջանը ռազմական գործողություններ սկսեց ղարաբաղա-ադրբեջանական շփման ողջ երկայնքով՝ խախտելով զինադադարի մասին Ադրբեջանի, Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի կողմից 1994 թվականի մայիսի 12-ի եռակողմ համաձայնագիրը: Նենգ ազերին երկար ժամանակ պատրաստվում էր՝ հարմար պահին հարձակվելու համար: Վայրագությունը, ապրելու և գործելու վայրենաբարո տեսակն են բնորոշ մեր թշնամուն, ով չի կարողանում հաշտվել ուրիշի հողը չսեփականացնելու մտքի հետ, ով հարձակվում է գողեգող, ով կարողանում է խոշտանգել ծերին, զինվորին ու մանուկին, ով առանց ցավի ու խղճմտանքի գնդակահարում է իր բանակի խուճապահար փախչող զինվորին...

Այս քառօրյա չհայտարարված պատերազմը շատ բան բացահայտեց. այն, որ դիրքերում կանգնած մեր 18-19-20 տարեկան զինվորների մարտական ոգին բարձր է, որ նրանք իսկապես պատրաստ են պաշտպանելու հայրենիքի ամեն թիզ հողը, որ մարտի դաշտում չեն լքում ընկերոջն, ու հրամանատարին:

Ապրիլյան պատերազմի ընթացքում ազերի թշնամին գործի դրեց իր ռազմական տեխնիկայի ողջ զինանոցը՝ կիրառելով նաև միջազգային կազմակերպությունների կողմից պատերազմների ընթացքում արգելված միջոցներ:

Հայ զինվորներն ու սպաները կյանքի գնով պաշտպանելով սահմանը՝ բազմաթիվ սխրանքներ գործեցին մարտի դաշտում: Նրանց օգնության հասան ազատամարտիկները: Մարտական դիրքերը պաշտպանելիս, ավա՜ղ, զոհեր ունեցանք: Ջոհվեցին նոր-նոր կյանք մտնող տղաներ, որոնք երազանքներ ու նպատակներ ունեին, բայց նրանցից ոչ մեկը դասալիք չդարձավ:

Հայ ժողովուրդը միասնության ու համերաշխության բռունցք դարձավ ապրիլյան առաջին օրերին՝ կազմակերպված օգնություն ցուցաբերելով ռազմաճակատին:

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի ղեկավարությունը որոշում է կայացրել այսուհետև ուսումնամեթոդական աջակցություն ցուցաբերել Արցախի սահմանային դպրոցներին:

Մեր համալսարանի բյուջեից 10 մլն դրամ փոխանցվեց ԼՂՀ ֆինանսների նախարարության հաշ- ➤ 2

ՎԱՀԱԳՆ ԴԱՎԹՅԱՆ

...Քո մկրտության սուրբ
ծեսն են արել
Կապույտ լեռները անառ Արցախի,
Քո կնքահայրը վրեժն է ահեղ,
Եվ քո մեռոնը՝ լեղին մեր ցավի:
Քեզ շատ են փորձել արծիծ
ու կրակ,
Բայց նահանջել են ոգուդ
ցոլանքից,
Լույսի սուրբ սյունը որքան էլ
բարակ,
Բայց զորավոր է ական ու արկից:
Դու՝ նոր Անդրանիկ, նոր
Աղբյուր Սերոբ,
Աչքերիդ խորքում շանթն է
նույն տենդի,
Դու՝ դեռ անանուն, դեռ անհայտ
հերոս,
Բայց շուտով պիտի փոխվես
լեգենդի...

1992 թ.

Ժողովրդավարության ապահովումը կրթության միջոցով

Մանկավարժական համալսարանի ուսումնական գործընթացների կազմակերպման գծով պրոռեկտոր Միհր Մելիք-Բախշյանը Բրյուսելում մասնակցել է ԵԽ կրթության նախարարների «Ժողովրդավարության ապահովումը կրթության միջոցով, կրթության դերը ժողովրդավար մշակույթի իրավասության զարգացման համար» խորագրով համաժողովին:

Հայկական պատվիրակությունը ղեկավարել է ՀՀ ԿԳ նախարար Լևոն Մկրտչյանը:

Համաժողովին մասնակցել են շուրջ 50 պետությունների կրթության նախարարներ, անց են կացվել մի շարք կարևոր քննարկումներ՝ ներառական հասարակություն կառուցելու և ժողովրդավարական անվտանգություն ապահովելու գործում կրթության՝ որպես առանցքային գործոնի վերաբերյալ:

Եվրոպական խորհրդի հիմնական գործողությունների պլանն ընդգրկում է պայքար բռնի գործողությունների և ահաբեկչությունների դեմ, որն ուղղված է հասարակության համար անվտանգության բարձրացմանը, բռնի գործողությունների և անհանդուրժողականության կանխարգելմանը: ➤ 2

ՄԵՐ ԽԱՂԱՂ ԱՌԱՎՈՏՆԵՐԻ...

➢ 1 վեհամարին, առաջիկա օրերին իրենց աշխատավարձերից գումար կփոխանցեն նաև բուհի աշխատողները:

Համալսարանի կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետը համագործակցում է ՀՀ ՊՆ-ի և հանրապետական զինկոմիսարիատի հետ՝ կազմակերպելով հոգեբանական ծառայություն Լեռնային Ղարաբաղում և Հայաստանում:

Համալսարանի ուսանողական խորհուրդը ուսանողական նախաձեռնությամբ հանդես եկավ՝ 400000 դրամ և առաջին անհրաժեշտության իրեր հասցնելով պատերազմական գոտի:

Առաջիններից մեկը նաև պատմության և իրավագիտության ֆակուլտետի ուսանողներն էին, որ ծանրոցներ ու քաջալերող նամակներ ուղակեցին սահմանը պահող զինվորներին:

Լեռնային Ղարաբաղի զինվորներին ու անտուն մնացած բնակիչներին ցուցաբերված բարոյական և նյութական աջակցությունն այն նվազագույնն է, որ կարող է անել յուրաքանչյուր հայ մարդ:

Մենք բոլորս խորապես ցավում ենք ապրիլյան զոհերի համար, խոնարհվում ենք մեր խաղաղ առավոտների համար նահատակվածների շիրիմների առաջ, կիսում ենք նրանց հարազատների վիշտը:

Ու թեև ծեռք է բերվել հրադադարի բանավոր պայմանավորվածություն, թշնամին նորից կրակում է, ու սահմանն էլի անհանգիստ է:

Ապրիլյան պատերազմի դասերը մեզ կրկին ցույց տվեցին, որ պետք է ուժեղ լինենք, աչալուրջ և պատրաստ՝ դիմակայելու ցանկացած ոտնձգության:

90-ականների պատերազմում հաղթած երկրի զինվորը այսօր էլ չպետք է տկարանա կամ թուլանա: Մենք պետք է մեր հույսը մեզ վրա դնենք, չտարվենք սեփական շահով առաջնորդվող երկրների խոստումներով, շարունակելով , սակայն, աշխարհին փաստերով ներկայացնել ազերի խուժանի նենգ ու վայրագ պահվածքը: Ու միշտ զգոն լինենք՝ հիշելով դեռևս 1918 թվականին Մեծն Թումանյանի գրած խոսքերը.

Բերանն արնոտ Մարդակերը էն անբան
Հազար դարում հազիվ դառավ Մարդասպան.
Ձեռքերն արնոտ գընում է նա դեռ կամկար,
Ու հեռու է մինչև Մարդը իր ճամփան:

ժողովրդավարության ապահովումը կրթության միջոցով

➢ 1 Կրթությունը առանցքային գործոն է համարվում առավել ապահով և ժողովրդավարական հասարակություն ստեղծելու գործում և ենթադրում է, որ ազգային մակարդակում դպրոցներում ուսուցիչները և կրթության ղեկավարները պետք է առանձնակի ուշադրություն հատկացնեն սովորողների մեջ ժողովրդավարական գիտելիքների, արժեքների և հմտությունների ձևավորմանը:

Նիստը հնարավորություն կտա ստեղծելու նոր աշխատանքային շրջանակ՝ ժողովրդավարական մշակույթի համար անհրաժեշտ հմտություններ, քննադատական մտածողություն և արժեքներ ձևավորելու համար, ինչպես նաև քննարկել այն արդյունավետ մեթոդներն ու միջոցները, որոնցով հնարավոր կլինի ապահովել ժողովրդավարական հասարակություն և հավասար իրավունքներով կրթություն:

Համաժողովի աշխատանքներն ամփոփող փաստաթուղթը «Կրթության միջոցով ժողովրդավարության ապահովում» հռչակագիրն էր:

Մասնակցեցին Մոսկովյան միջազգային կրթական ցուցահանդեսին

Մանկավարժական համալսարանի ուսումնական գործընթացների կազմակերպման հարցերով պրոռեկտոր Միեր Մելիք-Բախշյանը ապրիլի 13-ին ՀՀ կրթության և գիտության նախարար Լևոն Մկրտչյանի գլխավորած պատվիրակության կազմում մասնակցեց Մոսկովյան միջազգային կրթական ցուցահանդեսին:

Հայաստանյան պատվիրակության կազմում էին նաև ՀՀ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը և Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի ռեկտոր Արմեն Դարբինյանը:

Ցուցահանդեսին ներկայացված էին տարբեր երկրների առաջատար կրթական հաստատություններ և հայտնի միջազգային ընկերություններ:

Միեր Մելիք Բախշյանն այցի ընթացքում մասնավոր հանդիպումներ է ունեցել ռուս գործընկերների հետ, պայմանավորվածություն ձեռք բերել փոխադարձ այցելություններ կազմակերպելու վերաբերյալ:

ՀՀ ԿԳ նախարար Լևոն Մկրտչյանը տեղի հայկական դպրոցների համար Մանկավարժական համալսարանում ուսուցիչներ պատրաստելու համագործակցության պայմանավորվածություն է ձեռք բերել Աբխազիայի իր գործընկերոջ հետ:

Այցի ընթացքում Լևոն Մկրտչյանը մասնակցել է նաև ԵԱՏՄ մասնակից-պետությունների կրթության և գիտության նախարարների հանդիպմանը և ելույթ ունեցել:

Հանդիպման վերջում մասնակից պետություններից Հայաստանի, Ռուսաստանի, Բելառուսի և Ղազախստանի կրթության նախարարները միասնական կրթական տարածք ստեղծելու վերաբերյալ հուշագիր են ստորագրել:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ

Մանկավարժական համալսարանի հերթական գիտական խորհրդի նիստում քննարկվեցին «Համալսարանի զարգացման ռազմավարական ծրագիրը» և «Երիտասարդ մասնագետների պատրաստման գործընթացը» հարցերը:

ՀՊՄՀ զարգացման ռազմավարական ծրագրի մասին զեկուցումով հանդես եկավ կրթության բարեփոխումների ոլորակի վարչության պետ Մկրտիչ Ավագյանը, իսկ երկրորդ հարցի մասին զեկուցողը պրոռեկտոր Սրբուհի Գևորգյանն էր:

Մկրտիչ Ավագյանը գիտխորհրդի անդամներին ներկայացրեց այն աշխատանքը, որ կատարվել է համալսարանի զարգացման ռազմավարական ծրագրի ամբողջական փաթեթի ստեղծման համար, որտեղ ի մի են բերվել ու ներառվել ֆակուլտետների ամբիոնների կողմից արված իրատեսական բոլոր առաջարկությունները:

Ռազմավարական ծրագրի հիմքում նաև «2011-2015 թվականների ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծություն» և «2015 թվականի ՀՊՄՀ ինստիտուցիոնալ կարողությունների բարելավման պլան» փաստաթղթերն են: Այսպես ուրվագծվեց ծրագրի բովանդակությունը, որի հիման վրա, բազմաթիվ շահագրգիռ քննարկումների արդյունքում, այն դարձավ գործողությունների ուղեցույց ու տեսլական:

Զեկուցողը ամենայն մանրամասներով ներկայացրեց լրամշակված փաստաթղթի բովանդակությունը, առաքելությունն ու տեսլականը. բարձրագույն կրթության նոր մոտեցումները՝ ըստ նպատակների, խնդիրների անհրաժեշտ քայլերի ու ժամանակացույցերի:

Զեկուցման հենքը բարձրորակ կրթության նորագույն մոտեցումներն էին, արդիական հետազոտություններն ու նորարարությունը, մարդկային ռեսուրսների կառավարումը, կողմնորոշված դիմորդների և ուսումնառողների խնդիրները, արդյունավետ կառավարման, ֆինանսական կայունության և ժամանակակից ենթակառուցվածքների, ինչպես նաև հանրային ներգրավման, սոցիալական համագործակցության և ծառայությունների, արտաքին կապերի և միջազգային գործունեության ընդլայնման հարցերը:

Զեկուցման շուրջ ելույթ ունեցավ Մանկավարժական համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր Ռուբեն Միրզախանյանը: Նա ևս մեկ անգամ փաստեց, որ փաստաթղթի ձևավորմանը նախորդել են մի շարք քննարկումներ բուհի տարբեր կառույցներում: Համալսարանը ՊՈԱԿ-ից շուտով կվերակազմավորվի հիմնադրամի, կձևավորվի նոր խորհուրդ, որն էլ կհաստատի համալսարանի զարգացման ռազմավարության փաստաթուղթը: Ռեկտորը հավաստեց, որ ներկայացված փաստաթուղթը անհրաժեշտ լրամշակումների է ենթարկվել, որին հետևելու է գործողությունների ծրագիրը:

Այնուհետև, բաց քվեարկությամբ, «Համալսարանի զարգացման ռազմավարական ծրագրի նախագիծը» միաձայն ընդունվեց որպես ծրագիր:

ՀՊՄՀ-ի ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր Սրբուհի Գևորգյանը ներկայացրեց ՀՊՄՀ-ում պրոֆեսորադասախոսական կազմի կենսաբանական միջին տարիքի վերլուծության արդյունքները՝ նշելով, որ 51 ամբիոններից 30-ը մտնում են բարձր ռիսկայնության ցուցանիշի մեջ. կենսաբանական միջին տարիքը տատանվում է 51-65-ի սահմաններում, ինչպես նաև միջին ռիսկայնության շուրջ 14 ամբիոններում միջին տարիքը 46-50- ի սահմաններում է:

Պրոռեկտոր Սրբուհի Գևորգյանը հանդես եկավ գործընթացի բարելավմանն ուղղված առաջարկներով՝ հիմնականում շեշտը դնելով ուսանողների՝ օտար լեզվի և տեղեկատվական տեխնոլոգիաների իմացության, մասնագիտական կադրերի երիտասարդացման նպատակով դեռևս մագիստրոսական կրթության շրջանից օրինակելի և բարձր գիտականություն դրսևորող մագիստրոսների մոտիվացման, ինչպես նաև տարբեր գիտական ծրագրերում երիտասարդ խոստումնալից մասնագետների պարտադիր ընդգրկման վրա:

Օրակարգում կային նաև գիտական կոչումների շնորհման և այլ հարցեր:

Պրոռեկտոր Միեր Մելիք-Բախշյանը ներկայացրեց Նախապատրաստական բաժնի կանոնակարգը, 2016-2017 ուսումնական տարվա մասնագիտությունների ուսման վարձերն ու ուսումնական պլանը, մագիստրոսի և բակավրի կրթական ծրագրի առկա և հեռակա ուսուցման համակարգի մասնագիտությունների ուսումնական պլանները՝ նկատելով, որ առաջիկա ուսումնական տարում բուհում կներդրվեն նոր մասնագիտություններ:

Ուսումնագիտական գծով պրոռեկտոր Սրբուհի Գևորգյանի ներկայացմամբ Գիտական խորհուրդը հաստատեց Գիտահետազոտական կետրոնի կանոնակարգը:

Օրակարգային հարցերն սկսելուց առաջ էլ ռեկտոր Ռ. Միրզախանյանը շնորհավորեց համալսա-րանի ամսվա հոբելյարներին:

Ռեկտորը ՀՀ Մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանի անունից համալսարանի երկարամյա մանկավարժական գործունեություն ծավալած պրոֆեսոր Արկադի Շեկունցին 80-ամյա հոբելյանի առթիվ հանձնեց նախարարության «Ոսկե մեդալ»:

Հուզմունքից կոկորդդ սեղմվում է, արցունքներդ մոլորվում են, թախիծը կծկվում է ցավից... Ափսո՜ս, հազար ափսոս բոլոր հայ տղաներին, որ զոհվեցին հայրենի հողը պաշտպանելիս, որ հող դարձան, դարձան հուշ ու հուշաքար:

Մենք պետք է հիշենք բոլորին անուն առ անուն. Դա նրանց այլևս պետք չէ, բայց մեզ՝ ապրողներիս շա՜տ է պետք՝ Կյանքի, Հայրենիքի ու Հերոսների օրինակի գինն իմանալու, ազնիվ ու շիտակ ապրելու համար:

Նորայր Ժորայի ԳԱՍՊԱՐՅԱՆ

Սերժանտ Նորայր Ժորայի Գասպարյանը ծնվել է 1996 թվականի փետրվարի 2-ին Սյունիքի մարզի Կապան քաղաքում: 2014 թվականին նա ընդունվել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի կուլտուրայի ֆակուլտետը՝ պարարվեստի մանկավարժություն մասնագիտություն ձեռք բերելու համար: Սովորելու և ուսուցանելու ձգտում ուներ, լի էր կյանքով ու կենսախնդությամբ:

Նա պիտի մեկներ հայոց բանակ՝ իր պարտքը կատարելու: Չհասցրեց

Մանկավարժական համալսարանում նստել ուսանողական նստարանին. զորակոչվեց բանակ ժամկետային ծառայության:

Նորայրի զորացրվելուն ընդամենը երկու ամիս էր մնացել… Ցավով ու ափսոսանքով նայում եմ նրա ֆեյսբուքյան էջի գրառումները: Մարտ ամսին Նորայրը գրառում է արել, թե քանի ամիս, շաբաթ, օր, ժամ ու վայրկյան է մնացել տուն վերադառնալուն: Անգամ ապրիլի մեկին կատակել է էջում, հետո գրել, որ դա ապրիլմեկյան կատակ էր…

Ապրիլի առաջին օրերին, երբ ղարաբաղա-ադրբեջանական շփման գծում մարտական գործողություններ սկսվեցին, Նորայրի ընկերները սոցցանցերում գրառումներ էին անում՝ անհանգստանալով վերջինիս համար:

Ապրիլի 2-ին Հասմիկ Հարությունյանը նրա էջում գրել էր. «Տղերք ջան, դիմացեք, մեր աղոթքները ձեզ հետ են, աստված ձեզ պահապան»:

Ապրիլի 3-ին արդեն նրա էջում ընկերները քննարկում են՝ լուր չկա Նորոյից, իսկ Իննա Ալեքսանյանը գրում է, որ նրա հետ ամեն ինչ նորմալ է, հետը խոսել է, 2-րդ գծում է, որովհետև առաջին գծում ազատամարտիկներն են, բոլորին շնորհակալություն հայտնելով անհագստանալու համար:

Օլյա Գաբրիելյանը նրա էջում գրել է. «Թող հայ զինվորը միշտ էլ իմանա, որ հայ աղջիկը միշտ իրա կողքնա» …

Հուսադրող, քաջալերող, զինվորի բազկին ուժ տվող խոսքեր, որ, ավա՜ղ, չօգնեցին, չփրկեցին… Եվ ահա զոհվելու, նահատակվելու գույժը…

Աննա Ավետիսյանը ապրիլի 7-ին զոհվածի էջում գրել է. «2 ամիս էր մնացել, որ դու վերադառնայիր, չեմ կարողանում հավատալ…

Հավերժ փառք քեզ, Աստված հոգիդ լուսավորի ՄԵՐ ՀԵՐՈՍ Նորո ՁԱՆ, մեկ է, մենք միշտ քեզ ուրախ պարելիս կհիշենք…»

Լիդ Հարությունյանն էլ նրա էջում այսպիսի գրառում է արել.

«Աստված հոգիդ լուսավորի մեր ՀԵՐՈՍ եղբայր…»

Դեռ երկար ճանապարհ ունեիր անցնելու....

Բարի, ազնիվ ու կամեցող էակ ...

էն, որ ասում էիր.

- Պեն չի մնացա, հեսա կալույմ...

«Հայրենասիրությունը մշակույթի գիտակցություն է»

Թեքեյան մշակութային միության Նյու Յորքի մասնաճյուղի «Մեր Մկրտչեան» թատերախումբը ապրիլի 13-ին Մանկավարժական համալսարանի կուլտուրայի ֆակուլտետի դահլիճում համալսարաականներին ներկայացրեց Պերճ Զեյթունցյանի «Ոտքի՛, դատարանն է գալիս» թատերգությունը ժիրայր Բաբազեանի բեմադրությամբ:

Սփյուռքահայ մերօրյա փայլուն աստղերից է թատրոնի վարպետ փարիզաբնակ բեմադրիչ Ժիրայր Բաբազեանը, ով ծնվել է Կահիրեում: Հայրենիքի սահմաններից դուրս, առաջին անգամ 1981-ին Ամերիկայի Միշիկընի օպերայում հանդգնել է բեմադրել «Անուշ» օպերան: 2001-ին Սան Ֆրանցիսկոյի օպերայում մասնակցել է «Արշակ Բ» օպերայի բեմադրությանը հեղինակային սկզբնական բնագրով, իսկ Փարիզում ֆրանսերեն լեզվով ներկայացրել է Հակոբ Պարոնյանի «Ատամնաբույժն արևելյան» կատակերգությունը և Տիգրան Չուխաջյանի «Կարինե» օպերան:

Ժ. Բաբազեանի աշխատանքը ոչ պրոֆեսիոնալ թատերախմբի հետ Նյու Յորքի և Նյու Ջերսիի բեմերից հետո ահա և Մանկավարժականի բեմում է, թեմայի արդիականությամբ այնքան համահունչ և սրտամոտ ապրիլյան քառօրյա պատերազմից ծնված մերօրյա ահագնացող թախծին ու տխրությանը… Թվում է՝ մշակույթով կարող ենք դույզն-ինչ սփոփվել՝ արտահայտելով մեր վրեժի ցասումը, անարդարության դեմ ըմբոստանալով, պատմության դատին հանձնելով թուրք բարբարոսի հրեշավոր ոճրագործությունը…

«Սպաննած եմ մարդ մը, բայց մարդասպան չեմ»՝ ասում է Յարութ Պարսումեանի կերպավորած վրիժառուն՝ Սողոմոն Թեհլերյանը, բայց հաջորդ պահին դատախազի մեղադրականին՝ «Դու մարդ ես սպանել», պատասխանում է. «Մի՞թե ան մարդ է»…

Դասական և ժամանակակից լուծումների համադրմամբ ներկայացումը նույնքան հետաքրքիր բեմադրմամբ մատուցվեց հանդիսատեսին: Սփյուռքահայ դերասանները ոչ միայն պատվով հաղթահարեցին անծանոթ բեմի տեխնիկական դժվարությունները, այլև սիրտ ու հոգի դրեցին յուրաքանչյուր կերպավորման մեջ, քանզի արդարության հարուրամյա մեր պահանջն ու ձգտումը ավելի քան համամարդկային է…

Ներկայացման ընդմիջման ընթացքում փորձեցի զրուցել բեմադրիչ Ժիրայր Բաբազեանի հետ.

- Ինչո՞ւ հատկապես հիմա որոշեցիք ներկայացումը բեմադրել Հայաստանում: Դա կապվա՞ծ էր ղարաբաղա-ադրբեջանական շփման գծի մարտական գործողությունների և հայության մերօրյա ցասման հետ…

- Դա կապ ունի ոչ միայն ղարաբաղա-ադրբեջանական շփման գծում տեղի ունեցող իրադարձությունների հետ: Դա կապ ունի նաև այսօր ողջ աշխարհում կատարվող իրադարձությունների հետ. այն, ինչ կատարվեց Քեսաբում, Սիրիայում, Դեր Զորում, մահմեդական աշխարհում. ուրեմն շատ այժմեական վիճակ է ստեղծվում: Մենք այդ մասին ներկայացման վերջում ավելացրել ենք և խոսելու ենք:

- Ի՞նչ եք մտածում պատերազմի մասին:

- Էհ, ի՞նչ պիտի ասեմ: Շատ լուրջ և մտահոգիչ կացություն է:

- Մշակույթը ի զորո՞ւ չէ պայքարել:

- Մշակույթը միշտ ի զորու կլինի, պայքարում է: Առանց մշակույթի ազգը գոյություն չունի: Մենք չունենք փող ու ադամանդ: Մենք մի բան ունենք՝ մշակույթ: Եթե կարողանանք աշխարհին ծանոթացնել այդ մշակույթը, եթե կարողանանք մեր մշակույթի բանաստեղծությունը օտար հասարակությանը ներկայացնել պրոֆեսիոնալ դերասաններով, նրանք կհետաքրքրվեն մեր պատմությամբ: Մեր մշակույթը պետք է կարողանանք աշխահին ներկայացնել օտար լեզուներով,

➤ 4

ՈՒՍԱՆՈՂ ՀԵՌՈՒՍՏԱԼՐԱԳՐՈՂՆԵՐԸ՝ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ

«Բաց դռներ» ծրագրի շրջանակում Մանկավարժական համալսարանի հեռուստալրագրության 4-րդ կուրսի ուսանողները այցելեցին ՀՀ Ազգային ժողով:

Նրանք հետևեցին օրենսդրի հերթական քառօրյա նիստերի աշխատանքին, ծանոթացան խորհրդարանի կառուցվածքին, օրենսդիր գործունեությանը, լիազորություններին և գործառույթներին:

Մանկավարժական համալսարանի ուսանողներին ընդունեց և բաց դասը վարեց ԱԺ փոխնախագահ, ՀՊՄՀ շրջանավարտ Էդուարդ Շարմազանովը:

Ներկաների հետ փոխանախագահը նախ քննարկեց լրագրողի մասնագիտության առանձնահատկությունները: «Լրագրողն ավելի շատ կարող է ազդել հանրության կածիքի ձևավորման վրա, քան մի շարք քաղաքական գործիչներ»: Փոխխոսնակը կարևորեց առողջ լրատվական դաշտի ազդեցությունը երկրում ընթացող գործընթացների վրա:

Էդուարդ Շարմազանովն անդրադարձավ վերջին օրերին ղարաբաղա-ադրբեջանական սահմանին տիրող իրավիճակին և հայոց բանակի ռազմական գործողություններին: «Եթե ցանկանում ես ունենալ պետականություն, հայենիք, զորք, ապա պետք է վճարես. սա է անկախության գինը: Մեր դիմաց կանգնած է մի թշնամի, որը 20 տարի շարունակ շահույթ է կուտակել: Վերջին օրերի իրադարձությունները սակայն ցույց տվեցին, որ նրանք որևէ հաջողության չեն կարող հասնել»,- ասաց Էդուարդ Շարմազանովը:

Խոսելով միջազգային հանրության գնահատականի մասին՝ Աժ փոխնախագահը նկատեց. «Միջազգային հանրության պահվածքը ոչ միայն չի գոհացնում ինձ, այլև վրդովեցնում է: Յուրաքանչյուր պետություն ունի իր ազգային շահը. մենք պետք է սովորենք հույսներս մեզ վրա դնել, չմոռանալով, որ ավելի լավ է վատ խաղաղություն, քան լավ պատերազմ»:

Է. Շարմազանովը խոսեց նաև այս օրերին ընթացող տեղեկատավական պատերազմների մասին՝ նկատելով, որ սա ևս մեկ անգամ ապացուցում է լրագրողի մասնագիտության կարևորությունը: Նա ապագա լրագրողներին մաղթեց ամենայն բարիք և հույս հայտնեց, որ կդառնան փորձառու լրագրողներ ու ճաշակ թելադրողներ:

Սոնա ԱՐԱՄՅԱՆ

ՕՆԼԱՅՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ

Նովոսիբիրսկի պետական մանկավարժական համալսարանի կազմակերպած «Մանկության հոգեբանամանկավարժական աջակցության ժամանակակից ուղղությունները» խորագրով միջազգային օնլայն գիտաժողովին «Ներառական կրթության հիմնախնդիրները բուհական համակարգում» թեմայով զեկուցումով հանդես եկավ նաև մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Թերեզա Ազատյանը: Նա անդրադարձավ բուհական համակարգում, մասնավորապես Մանկավարժական համալսարանում առկա խնդիրներին:

«Համալսարանը բավականին մեծ ուշադրություն է դարձնում

կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցողների համար պայմանների ստեղծմանը. մենք այսօր ունենք թույլ տեսնողների համար նախատեսված հատուկ դեղին գծանշաններ՝ շքամուտքից սկսված, ՀՊՄՀ թանգարանում գործում է աուդիոգիդ, իսկ ընթերցասրահում՝ ձայնային մի շարք ծրագրեր»,- ասաց Թերեզա Ազատյանը և հավելեց, որ բուհն այսօր անում է ամեն հնարավորը հենաշարժողական համակարգի խանգարում ունեցող անձանց համար ևս անհրաժեշտ պայմաններ ստեղծելու համար:

Իր զեկուցման մեջ հատուկ մանկավարժը կարևորեց հատուկ կարիքներ ունեցող անձանց հարմարեցումը կրթական գործընթացում, ինչպես նաև ուսանողական խմբերում առանձնահատուկ կարիքներով անձանց միջանձնային շփումը: Թ. Ազատյանը հույս հայտնեց, որ համագործակից կողմերի հետ համատեղ իրականացվող կրթությունը կնպաստի կրթական գործընթացի որակի, ուսանողների իմացության և մասնակիցների անձնային աճի բարձրացմանը, ինչպես նաև նրանց սոցիալական կոմպետենտության զարգացմանը: «Հատուկ կարիքներ ունեցող անձանց ներառումը կրթական գործընթացում և պրակտիկ գործունեության մեջ նպաստում է լիարժեք ներառմանը, կրթության և հասարակության մարդասիրությանը»,-հավելեց նա:

Ի դեպ, Նովոսիբիրսկի պետական մանկավարժական համալսարանը Մանկավարժական համալսարանի գործընկերն է արդեն 5 տարի, և նման արդիական թեմաներով օնլայն գիտաժողովները հաճախակի են կազմակերպվում:

Միջազգային գիտաժողովին մասնակցում էր նաև Բելառուսի պետական մանկավարժական համալսարանը: Գիտաժողովին ներկա մագիստրոսներն օնլայն կապի միջոցով հնարավորություն ստացան լսել այլ մասնակիցների զեկուցումները ևս և քննարկում ծավալել:

Սոնա ԱՐԱՄՅԱՆ

➤ 3 բայց դրա համար մեծ գումարներ են հարկավոր, ինչը չունենք: Այնպես որ շատ դժվար է այդ պայքարը մղել: Բայց ամեն անգամ, երբ մենք օտար լեզվով որևէ բան ենք ներկայացնում, օտարերկրացին հետաքրքրվում է մեր պատմությամբ ու մշակույթով: Մեկ օրինակ բերեմ. երբ Փարիզում ներկայացրի «Կարինե» օպերան, մեծ հասարակության համար, Փարիզի բեմադրիչների հետ, քաղաքապետն ասաց. «Տեսեք ուրախ տրամադրություն ստեղծող այս ստեղծագործությունը ներկայացնողը այն ժողովուրդն է, որը 1915-ին ենթարկվեց եղեռնի»:

- Ի՞նչ է Ձեզ համար հայրենասիրությունը:

- Հայրենասիրությունը նախ և առաջ գիտակցելն է, թե մենք ինչ ազգ ենք, ինչ մշակույթ ունենք: Հայրենասիրությունը մշակույթի գիտակցությունն է ու զարգացումը: Դա այն է, որ մենք կարողանանք սփյուռքի դպրոցներում հայրենագիտություն դասավանդել: Ես ֆրանսիական կինոյում եմ աշխատում ֆրանսիացիների հետ: 100-ամյակի առիթով ինձ հրավիրեցին Նյու Յորք, որպեսզի այս գործը բեմադրեմ: Ես չմերժեցի:

Ու քանի որ ես աշխատում էի ոչ պրոֆեսիոնալների հետ, դժվար էր, բայց դերասանները շատ նվիրյալներ են, և ներկայացումը ստացվեց: Երրորդ անգամ այստեղ ենք ներկայացնում «Ոտքի՛, դատարանն է...» թատերգությունը: Թատերախումբը հիմնադրվել է 1997-ին և աշխարհի տարբեր բեմերում ներկայացրել է շուրջ 20 ներկայա-ցում: 77 ոչ պրոֆեսիոնալ, բայց նվիրյալ դերասաններ և 50 աշխատակից ունեցող թատերախումբը իսկական դպրոց է հայության համար, քանզի մաքրամաքուր հայերենով ներկայացնում է մի ողջ ազգի մշակույթ:

Յարութ Պարսումեանը, որ բնիկ հալեպցի, բայց արդեն 13 տարի ապրում է Նյու Յորքում, ներկայացնում էր Սողոմոն Թեհլերյանին: Երբ հետաքրքրվեցինք, թե ինչ զգացողություններով ստանձնեց հայ վրիժառուի դերը, նա ասաց. «Երբ հղացանք թատերախաղը ներկայացնելու գաղափարը, ես խնդրեցի ինձ տալ Սողոմոնի դերը: Այս դերն ինձ շատ հարազատ է. ծնվելով և մեծանալով Հալեպում՝ ես դեռևս դպրոցից դաստիարակվել եմ ազգային երգերով ու գաղափարներով, հայրենասեր միջավայրում: Բայց չգիտեի, որ այսքան դժվար կլինի խաղալ Թեհլերյանի դերը: Որովհետև պատմությունը միայն նա չէ, որ Սողոմոնը սպանեց Թալեաթին, պատմությունը շատ ավելին է... Եվ ես սկսեցի պրպտումներ անել, որ կարողանամ դերի մեջ մտնել:

Իմ կարծիքով ամեն մարդ՝ որպես անձ, իր մեղեդին ունի, իր սաունթրեքը...Ես փորձեցի Սողոմոնի այդ ժամանակաշրջանի մեղեդին գտնել: Կարծում եմ ինձ շատ լավ հաջողվեց: Ինձ օգնեց նաև սիրիահայ լինելու փաստը: Պետք է ասել, որ պատերազմն ու ջարդերը չեն վերջացել: Մենք միշտ հաղթելու ենք, բայց թուրքը շատ նենգ է: Այսօր էլ այդ պատերազմն ու ջարդերը շարունակվում են: Մենք պետք է զգոն լինենք»:

Ներկայացման մեջ հնչող երաժշտական ստեղծագործությունը, գործիքավորումը և մշակումը կատարել է հենց Յ. Պարսումեանը, ով մասնագիտությամբ երաժիշտ է:

Ներկայացման սկզբից մինչև վերջ ես փորձում էի հասկանալ Գարնիկ Ներսէսեանի հոգեվիճակը. ինչպե՞ս է նա կարողացել իր մեջ հաղթահարել թուրք պարագլխին՝ Թալեաթ փաշային կերպավորելու դժվարին որոշումը: Երբ կուլիսների ետևում զրուցում էինք վերջինիս հետ, նա անկեղծացավ, ասաց, որ շատ դժվար էր խաղալ Թալեաթի դերը, որ մինչև ներկայացումը բեմադրելու վերջին շաբաթը չէր կարողանում հոգեբանորեն մտնել կերպարի մեջ:

«Ծնվել եմ Քեսաբում: Ինձ համար շատ դժվար էր այդ սրիկայի դերը խաղալ:16 տարվա դերասան եմ և առաջին անգամ ինձ համար շատ դժվար էր: Ամբողջ մարմնով դողում էի: Եվ միայն վերջին շաբաթում կարողացա մտնել այդ հրեշի դերի մեջ, ես ինձ թուրք ոճրագործ էի զգում, որ սպանել է տվել ընկերոջը՝ Զոհրապին...», - ասում է Գարնիկ Ներսէսեանը:

Թատերախմբի բեմադրիչը և դերասանները հպարտ էին ու ոգևորված, որ Հայաստանում՝ հայ հողի վրա հայ երիտասարդների գնահատանքին ու ծափերին արժանացան:

Միլվա ԱՍՐՅԱՆ

Նաև չինարենով

Մանկավարժական համալսարանի Վահան Թոթովենցի անվան N 57 հիմնական դպրոցի աշակերտները համերգային գեղեցիկ ձեռնարկով շնորհավորեցին Մայրության և գեղեցկության տոնը: Մայրերին գովերգող ու մեծարող բանաստեղծություններով և երաժշտական կատարումներով դպրոցի տարբեր դասարանների աշակերտները մի քանի լեզուներով ներկայացրին տարբեր երկրներում մայրերի օրվա խորհուրդը և շնորհավորեցին մայրերին: Աշակերտները պատահական չհամարեցին այն, որ ամենակարևոր բառերի հիմքում՝ *հայրենիք*, *եկեղեցի*, *լեզու*, *քաղաք*, ընկած է հենց մայր բառի իմաստը: Մանկան շուրթին հնչող առաջին բառը ևս մայրն է, այն քնքուշ է աշխարհի բոլոր լեզուներով՝ նկատեցին աշակերտներն ու շտապեցին անել հաջորդ խոստովանությունը՝ ամենագեղեցիկ և աղոթատուն հիշեցնող աչքերը մայրերինն են, և որ ազգից էլ լինի՝ «սրբություն է Աստվածության»:

Հատկանշական էր, որ առաջին անգամ աշակերտներն իրենց սիրելի մայրերին շնորհավորեցին նաև չինարենով՝ այդ երկրի ազգային պարով ու երգով:

Ի դեպ, դպրոցի առաջին դասարանցիները սեպտեմբերից սովորում են նաև չինարեն լեզուն: Դպրոցի տնօրեն Նաիրա Տողանյանը շնորհավորելով բոլորի տոնը՝ նկատեց, որ աշակերտները ջանք ու եռանդ չէին խնայել ջերմ մթնոլորտ ապահովելու և դրական զգացողություններ հաղորդելու համար:

Հիմնական դպրոցի չինարենի ուսուցչուհի, Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի ուսանողուհի Լիզա Աբոյանի կարծիքով՝ թեպետ չինարենը բարդ լեզու է, սակայն աշակերտները սիրում են, հետաքրքրված են և յուրացնում են հեշտությամբ:

ՀՊՄՀ դոցենտ Սամվել Միքայելյանն էլ, ով ռեժիսորական աշխատանքով աջակցել էր միջոցառման կայացմանը, կարևորեց բեմում մոր, ինչպես նաև նրան պաշտպանող հայ զինվորի կերպարը:

Միջոցառման ավարտին ներկաները հոգևորականի ներկայությամբ Տերունական աղոթքով հարգեցին օրերս հայադրբեջանական սահմանում զոհված հայորդիների հիշատակը:

Սոնա ԱՐԱՄՅԱՆ

Մեկամսյա պրակտիկա Ֆրանսիայում

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի օտար լեզուների ֆակուլտետի ֆրանսերեն լեզու և գրականություն բաժնի բակալավրիատ 4-րդ կուրսի ուսանողուհի Գեղեցիկ Հակոբյանը ֆրանկոֆոն համալսարանական գործակալության դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում հաղթող ճանաչվելով՝ ստացել է կրթաթոշակ և մասնագիտական մեկամսյա պրակտիկան անցկացրել է Ֆրանսիայի Լիլ քաղաքի «Անատոլ Ֆրանս» քոլեջում: Պրակտիկայի ընթացքում Գեղեցիկին հնարավորություն է ընձեռվել 11-16 տարեկան աշակերտներին դասավանդել ֆրանսերենը որպես օտար լեզու: Դասավանդելու հետ մեկտեղ Գեղեցիկը նաև ունկնդրել է որոշ դասընթացներ՝ ESPE և Լիլի 1 համալսարաններում: Չնայած ծանրաբեռնված գրաֆիկին՝ ուսանողուհին մասնակցել է մի շարք մշակութային այցելությունների Ֆրանսիայի տարբեր քաղաքներում:

«Այս պրակտիկան շատ լավ հնարավորություն էր իմ ֆրանսերեն բանավոր խոսքը քիչ թե շատ հղկելու, դասավանդման նոր մեթոդներ յուրացնելու, Ֆրանսիայի մշակույթին ավելի լավ ծանոթանալու և ընդհանուր մշակութային գիտելիքներս հարստացնելու, մտահորիզոնս ընդարձակելու, ինչպես նաև նոր ընկերներ ձեռք բերելու համար: Ցանկանում եմ երախտիքս հայտնել բոլոր նրանց, ովքեր աջակցել են ինձ պրակտիկան իրականացնելու համար»:

Գեղեցիկ Հակոբյանը կուրսընկերներին հորդորեց լավ սովորել և անել ամեն ինչ, որպեսզի իրենք ևս կարողանան պրակտիկան անցկացնել Հայաստանից դուրս՝ միաժամանակ ուսումնասիրելով արտերկրի փորձը:

Սոնա ԱՐԱՄՅԱՆ

Քննարկում Ֆինլանդիայի Օուլուի համալսարանի ուսանողների հետ

Սկզբնական կրթության ֆակուլտետի ուսանողները Skype-ի միջոցով միացան Ֆինլանդիայի Օուլուի համալսարանի հետ: Ուսանողներին ողջունեցին Օուլուի համալսարանի դասախոսներ Վեսա Մատտի Սարենիուսը, Հասմիկ Մինասյանը և նախորդ տարվա ամառային դպրոցին մասնակցած ուսանողները: Ուսանողների հետագա ուսումնառության, մասնագիտական կարողությունների զարգացման հեռանկարների, մասնագիտական կապերի և հետագա համագործակցության շուրջ ծավալվեց հետաքրքիր զրույց-քննարկում:

«Erasmus+» կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակներում Օուլուի համալսարանում 1 կիսամյակ ուսումնառող՝ սկզբնական կրթության ֆակուլտետի մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթություն) բակալավրի կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանողուհի Հայկուշ Երեմի Հարությունյանն իր ընկերներին ներկայացրեց Օուլուի համալսարանի կրթական միջավայրը, խոսեց իր ձեռքբերումների և հանդիպած դժվարությունների մասին: Նա ուսանողներին հորդորեց հատկապես զարգացնել օտար լեզվի իմացությունը:

Հանդիպում Պատմության և իրավագիտության ֆակուլտետում

Մանկավարժական համալսարանի պատմության և իրավագիտության ֆակուլտետում ապրիլի 6-ին հյուրընկալվել էր Ռուսաստանի ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի փոխտնօրեն, պատմական գիտությունների դոկտոր Թամարա Գուզենկովան, ով դասախոսների և ուսանողների առաջ հանդես եկավ «Եվրասիական ինտեգրացման արժեքային կողմնորոշիչները» դասախոսությամբ:

ՀՊՄՀ համաշխարհային պատմության ամբիոնի վարիչ Ռուբեն Սաֆրաստյանը ներկայացրեց Թ. Գուզենկովային՝ որպես ռուսաստանյան առաջատար գիտավերլուծական կենտրոնի մասնագետի, ով զբաղվում է Ռուսաստանի ժամանակակից ռազմավարական քաղաքականության փորձագիտական վերլուծություններով:

Բանախոսը խոսեց հայ-ռուսական բարեկամության, ընդհանուր շահերի ու հետաքրքրությունների մասին, ապա հանգամանորեն անդրադարձավ ԱՊՀ երկրների հարաբերություններին ՌԴ-ի Եվրասիական տնտեսական միության հետ, նրանցից յուրաքանչյուրի դերին քաղաքական-տնտեսական տարածքային շահերին հետամտելու առանձնահատկություններում:

Վերջինս անդրադարձավ նաև աշխարհաքաղաքական դաշտի կոնֆլիկտներին և երկրների քաղաքական ու տնտեսական շահերի բախմանն այդ համատեքստում: «Մեր քաղաքական էլիտան թույլ է»-ասաց փորձագետը՝ մասնավորապես կանգ առնելով Սիրիայի, Ուկրաինայի ճգնաժամերի վրա, Ռուսաստանի և Վրաստանի սահմանային խնդիրներին, Թուրքիայի քաղաքական-տնտեսական խաղին, ինչպես նաև Հայաստանի ու ղարաբաղա-ադրբեջանական թնջուկին: Հարցեր, որոնք վերոհիշյալ ռեգիոնների համար լուրջ դասեր են և պետք է լուծվեն քաղաքական համատեքստում:

Պատմության և իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմին և ուսանողներին «Եվրասիական ինտեգրացիայի արժեքային կողմնորոշիչները» թեմայով զեկուցում-ելույթում ներկայացրեց, որ ինստիտուտի հայ գործընկերների հետ զբաղվում են մի շարք հարցերի վերլուծությամբ, այդ թվում՝ ԵԱՏՄ-ում Հայաստանի ինտեգրման վերաբերյալ խնդիրներով. «Հայաստանը, որպես ինտեգրացիոն գործընկեր, չափազանց կարևոր է և նշանակալի. սա այն երկիրն է, որտեղ Ռուսաստանն ունի ամուր քաղաքական, ռազմական, տնտեսական կապեր, իսկ արժեքավոր պոտենցիալը թույլ է տալիս համագործակցել և իրականացնել լուրջ ծրագրեր տարբեր ոլորտներում»:

Թ. Գուզենկովան հավաստեց՝ Հայաստանը Ռուսաստանի Դաշնության համար կարևոր դաշնակից է, որը վերջինիս համար հիմնականում պայմանավորված է ռազմաքաղաքական գործընկերության հետաքրքրություններով: Վստահեցրեց, որ ԵԱՏՄ-ի գործունեության հիմքում ոչ միայն տնտեսական, այլև հոգևոր, մշակութային, փիլիսոփայական հարաբերություններն են:

Հանդիպման ավարտին ներկաները հյուրին ուղղեցին հարցեր, մասնավորապես՝ ԵԱՏՄ-ում Հայաստանի դերի, Ռուսաստանի և Հայաստանի կողմից ԼՂ-ի անկախության ճանաչման հնարավորությանը, Հայաստանում կատարվող իրադարձությունների վերաբերյալ ինստիտուտի գործունեությանը: Լսարանի կողմից հնչեցին սուր և տեղին հարցեր՝ կապված բարեկամ երկրին ու լեզուն ընտրելու մեր իրավունքի, ղարաբաղա-ադրբեջանական խնդրին ՌԴ-ի, Բելառուսի և այլ երկրների քաղաքագետների վերաբերմունքի հետ:

Ռուբեն Սաֆրաստյանը շնորհակալություն հայտնեց հետաքրքիր ու բովանդակալի ելույթի համար՝ ընդգծելով, որ մեր և Ռուսաստանի դարավոր բարեկամությունն անկեղծ է, և որ ՌԴ-ը մեր եզակի ռազմաքաղաքական դաշնակիցն է:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Ապրիլյան ցուցադրություն

Ապրիլի սկիզբը՝ լի քառօրյա պատերազմի տխրությամբ ու հիշողություններով, համընկավ Մայրության ու գեղեցկության տոնին: Ու թեև երկկողմ պայմանավորվածությամբ հարաբերական լռություն է սահմանին, բայց կրակոցներ են պարբերաբար հնչում, մեր ուսանողները ուժ գտան իրենց մեջ ստեղծագործական աշխատանքներով հանդես գալ՝ ցուցադրելով հայ ստեղծագործ մտքի ու ոգու ամրությունը:

Ցուցահանդեսը բացեց գեղարվեստական կրթության ֆակուլտետի դեկան Սարգիս Էլբակյանը: Նա շնորհավորեց ուսանողներին ցուցահանդեսի բացման կապակցությամբ, ապա բոլորին մաղթեց անսահման սեր. «Սիրեք միմյանց, ապրեք խաղաղ երկնքի տակ, ու թող որևէ պատերազմ չխաթարի այդ սերը»:

Մեկ րոպե լռությամբ ներկաները հարգեցին ղարաբաղա-ադրբեջանական առաջնագծում զոհվածների հիշատակը:

«Հայաստանի համար այս օրերին ցուցահանդեսի կազմակերպումը խրախուսելի է: Երբեք, ոչ մի պայմանում չպետք է մեր ազգը դադարի ստեղծագործել»- անթաքույց հուզմունքով ասաց արվեստի տեսաբան Վարդիթեր Գամաղալյանը»:

«Ընտրվել են շատ ճաշակով, եզակի ստեղծագործություններ, որոնք լավագույնն էին և՛ տեխնիկայի կատարողականությամբ, և՛ մտահղացմամբ»-ասաց մանկավարժական գիտությունների դոկտոր, դիզայնի և կիրառական արվեստի ամբիոնի վարիչ Անուշ Եղիազարյանը՝ դիմելով ուսանողներին. «Միշտ եղեք ստեղծագործող և ունեցեք լավ տրամադրություն: Իմ ցանկությունն է, որ դուք երբեմն նկարեք ազատ, կիսամյակի պահանջներից դուրս՝ ձեր հետաքրքիր ու նոր մտահղացումները դարձնեք արվեստի ստեղծագործություն: Ձեր ուժը արվեստի մեջ է. հայրենիքին ծառայեք ձեր արվեստով»:

«Դուք եք հայ տղամարդուն ոգեշնչողը և ոգևորողը»-ասաց ուսանողական խորհրդի նախագահ Ներսիկ Մարգարյանը՝ չմոռանալով ընդգծել, որ հերոս տղաները մեր հրաշալի մայրերի զավակներն են ու դաստիարակության պտուղը»:

Ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախագահ Զարուհի Խաչատրյանը, ով ցուցահանդեսի նախաձեռնողն էր ու կազմակերպիչը, շնորհավորեց ուսանողներին տոնի կապակցությամբ, ապա ներկայացրեց մրցույթում լավագույն ճանաչված ուսանողների անունները. Արմենուհի Խաչատրյան, Մարուսյա Մանասյան, Աննա Մարգարյան, Վիկտորյա Ղազարյան, Լիլիթ Գալոյան: Նրանց աշխատանքները մրցութային հանձնաժողովի կողմից արժանացան պատվոգրերի:

«Ցուցահանդեսը բազմաժանր է, ներկայացուցչական, մասնակցել են տարբեր ամբիոնների և կուրսերի ուսանողներ»-ասաց ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախագահը:- Ներկայացված են գեղանկար, գրաֆիկա, գոբելեն, բատիկա, մանրանկար, քանդակ, ոճավորված տարազներ, խեցեգործական աշխատանքներ,,:

Մայրության և գեղեցկության տոնին նվիրված ցուցահանդեսն ուղեկցվեց ջութակահարների մեղմ երաժշտությամբ:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Գոբելենի աշխատանքների ցուցադրություն

Գեղարվեստական կրթության ֆակուլտետի ճեմասրահն այս անգամ էլ զարդարում էին դիզայնի և դեկորատիվ-կիրառական արվեստի բաժնի 2-3-րդ կուրսերի ուսանողների 30-ից ավել գոբելեն աշխատանքները: «Գործվածքի դիզայն» առարկայի շրջանակում ուսանողների ներկայացրած աշխատանքների ցուցադրությունը նվիրված էր Անկախության 25-ամյակին և կանանց միամսյակին: Աշխատանքներում յուրաքանչյուրը ներկայացրել էր իր պատկերացումները, ապրումներն ու հույզերը:

«Գոբելենն էլիտար արվեստ է: Միայն այն եզակիները, ովքեր ունեն օժտվածություն, կարող են այս արվեստում ասել իրենց խոսքը և իրենց ձեռագիրն ունենալ: Գոբելենի աշխատանքների ցուցահանդեսները շատ սակավ են, քանզի սա շատ բարդ արվեստ է: Ցանկանում եմ ավելի մեծ ցուցահանդեսներում ներկայացված տեսնել ձեր աշխատանքները»,- ասաց դիզայնի և դեկորատիվ-կիրառական արվեստի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Անուշ Եղիազարյանը:

Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի վարիչ Արա Հակոբյանը շնորհավորելով ներկաներին ցուցադրության բացման կապակցությամբ՝ նկատեց.«Այսօր այս սրահը տեսնել այսպիսի գեղեցիկ գոբելեններով զարդարված՝ ինձ համար մեծ անակնկալ էր: Ավելի ուրախացա, երբ աշխատանքներում նկատեցի ազգային տարրեր. դա կարևոր հանգամանք է, քանզի, այսօր հաճախ տարվելով եվրոպական երևույթներով, մոռացվում է ազգայինը: Նման աշխատանքները պետք է ուղենիշ հանդիսանան մյուս ուսանողների համար»:

Արա Հակոբյանը նկատեց նաև, որ ուսանողների ստեղծագործելու համար համալսարանը ստեղծել է անհրաժեշտ բոլոր պայմանները, իսկ ֆակուլտետում դասավանդում են Հայաստանի լավագույն մասնագետները:

Ի դեպ, ցուցահանդեսը կայացել էր դիզայնի և դեկորատիվ-կիրառական արվեստի ամբիոնի դասախոսներ Նաիրա Մխիթարյանի և Նաիրա Թանգամյանի համատեղ ջանքերով: Դասախոս Նաիրա Մխիթարյանը նշեց, որ նման ցուցահանդեսներն արդեն ավանդույթ են դարձել ֆակուլտետում: «Գոբելեն գործելը բավականին ծավալուն աշխատանք է: Այսպիսի ցուցադրությունները նպաստում են, որ ուսանողներն ավելի ոգևորվեն և ուսումնառության ընթացքում իրենց հետագա աշխատանքներն ավելի լավ կատարեն: Դասավանդվող առարկան բավականին բարդ ու չճյուղավորված է. մենք ամեն ինչ անում ենք, որ ուսանողները ոչ միայն տեխնիկային տիրապետեն, այլև մասնագիտական լիարժեք կրթություն ստանան»,- ասաց Նաիրա Մխիթարյանը:

3-րդ կուրսի ուսանողուհի Անի Ամիրջանյանն այս ցուցահանդեսին ներկայացրել է մեկ աշխատանք: «Կակաչներ» աշխատանքում ուսանողուհին փորձել է պատկերել խաղաղությունը: «Իմ հոգեվիճակը, ապրումները, զգացողություններն եմ ներդրել այս աշխատանքում, կարծում եմ այդ ամենը որոշակի չափով կհասնի յուրաքանչյուր դիտորդին»,- ասաց Անին և հավելեց, որ նման ցուցահանդեսները քննարկումների լայն հարթակ են ստեղծում:

Սոնա ԱՐԱՄՅԱՆ

Տիկնիկաթերապիա

Հատուկ կրթության ֆակուլտետի լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի դասախոսներ, պրակտիկ արտ-թերապևտներ Արմինե Հայրապետյանը, Սոսե Խաչիբաբյանը և «Արտ-թերապիա» մասնագիտացման մագիստրատուրայի մի խումբ ուսանողներ կազմակերպել էին «Իմ տիկնիկը» խորագրով միջոցառում, որին մասնակցում էին բուհի հրավիրյալ կին դասախոսներն ու աշխատակիցները:

«Արտ-թերապիան բուժումն է արվեստի միջոցով, տիկնիկաթերապիան՝ արտ-թերապիայի մի քանի ուղղությունների մեկտեղումը»,-նշեցին բաժնի մագիստրոսները և ծանոթացրին խորհրդավոր մեթոդի՝ տիկնիկաթերապիայի սկզբնավորմանը, կիրառման ուղղություններին, նպատակներին և մեր երկրում մեթոդի դրվածքին: Խամաճիկ, խոշոր, հարթաչափական, ստվերային, թելե տիկնիկներ և այլն. սրանք տիկնիկների այն տեսակներն են, որոնցով իրագործվում են մեթոդի հիմնական նպատակները՝ սոցիալական հմտությունների, երևակայության, ստեղծարարության, խոշոր և մանր մոտորիկայի ու նաև խոսքի զարգացում:

Խոսելով տիկնիկների մասին՝ մասնագետները նկատեցին, որ նրանց միջոցով հնարավորել է կառավարել հույզերը, ինքնարտահայտվել, հաղթահարել ներքին կոնֆլիկտները, վախերն ու կարգավորել ընտանեկան հարաբերությունները:

Միջոցառումը գուգակցվեց նաև պրակտիկ մասով՝ ներկաները ընթացքում պատրաստեցին տիկնիկներ: Համադրելով զանազան գույնզգույն աքսեսուարներ՝ նրանք ստեղծեցին իրենց պատկերացումները, հույզերն արտահայտող մարդու և տիկնիկի սեփական կերպարները:

Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի վարիչ Ժաննա Պայլոզյանը շնորհակալություն հայտնեց դասախոսներին նախաձեռնության իրականացման համար՝ բարձր գնահատելով նրանց գործնական հարուստ փորձը, իսկ մասնակիցներն վստահեցրին՝ յուրաքանչյուրի կյանքում տիկնիկն ունեցել է առանձնահատուկ դեր ու նշանակություն, որ եկել է մանկությունից և ուղեկցում է ողջ կյանքի ընթացքում:

Մասնակիցներն էլ շնորհակալություն հայտնեցին նման գեղեցիկ նախաձեռնության համար և յուրաքանչյուրն իր հետ տարավ իր պատրաստած տիկնիկը որպես օրվա խորհուրդն ամփոփող հուշ:

Աշակերտները շրջեցին բուհում

Մանկավարժական համալսարանում այս անգամ հյուրընկալվել էին Նիկոլ Աղբալյանի անվան հմ. 19 հիմնական դպրոցի 9-րդ դասարանների աշակերտները և ուսուցիչները: Հյուրերը եղան թանգարանում, ծանոթացան բուհի ժամանակագրությանն ու պատմությանը, ապա իրենց տպավորությունները գրառեցին հուշամատյանում՝ նշելով, որ հետաքրքիր և ուսուցողական բովանդակությամբ այցը կնպաստի նաև մասնագիտական կողմնորոշման հարցում:

Դասղեկ Հռիփսիմե Գևորգյանը տարիներ առաջ է եղել բուհում, հաճելիորեն զարմացած է՝ համալսարանի առաջընթացն ակնհայտ է, այն բարեկարգվել է և գեղեցկացել:

«Պատանեկան այս տարիներին երեխաների մեծ մասն ուզում է բժիշկ կամ մանկավարժ լինել, սակայն տարիների ընթացքում փոխվում են պահանջները, մտածելակերպը և նրանցից քչերն են գնում նախապես մտածված ուղղությամբ»,- նշեց ուսուցչուհին և հավելեց, որ մասնագիտական կողմնորոշման շրջանակներում աշակերտները հաճախ են այցելում տարբեր հաստատություններ, ծանոթանում ամենատարբեր մասնագիտությունների գաղտնիքներին:

9-րդ դասարանի աշակերտ Լիպարիտ Թամազյանը Մանկավարժական համալսարանում առաջին անգամ չէ, սակայն թանգարան և գրադարան ցանկություն ուներ դասընկերների հետ գալ: Լիպարիտը տպավորված էր թանգարանով. առավել տպավորիչը Մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանի ուղերձն էր: Ապագա իրավաբանը լիահույս է, որ իր դասընկերներից շատերը կընտրեն Մանկավարժականում սովորելու ուղին:

Աշակերտները եղան նաև բուհի գիտական գրադարանում, շրջեցին ֆակուլտետներում, դիտեցին ՀՊՄՀ-ի մասին պատմող ֆիլմ:

Սիրեցէ՞ք զմիմեանս

Օտար լեզուների ֆակուլտետի գերմանական լեզուների ամբիոնի դասախոս Սիրարփի Կարապետյանի նախաձեռնությամբ 1-ին և 4-րդ կուրսերի ուսանողները նեկայացրին «Սիրեցէ՞ք զմիմեանս» խորագիրը կրող ցերեկույթ՝ նվիրված Սբ. Գրիգոր Նարեկացուն:

Ուսանողները հանգամանորեն ներկայացրին Նարեկացու կյանքն ու ստեղծագործությունը՝ առանձնահատուկ անդրադարձ կատարելով համաշխարհային գրականության գագաթներից մեկին՝ «Մատյան ողբերգության» պոեմին: Ուսանողների կողմից հատվածաբար հնչեցին պոեմի թարգմանությունները, ապա աղոթեցին հայերեն և անգլերեն, քանզի Մատյանի յուրաքանչյուր տող մի սրտառուչ աղոթք է առ Աստված:

Պոեմի հուզիչ, դրամատիկ պահերով հարուստ միջոցառումն ավարտվեց լավատեսության հաղթանակով, փրկության և աստվածային էության հետ միանալու՝ աստվածանալու հավատով:

Ցերեկույթի ավարտին ներկաները միասին Տերունական աղոթքով դիմեցին առ Աստված՝ մարդկության փրկության հավատով:

Մշակույթը երկխոսություն է

Ֆրանկոֆոնիայի միջազգային օրվա շրջանակում ՀՊՄՀ-ի օտար լեզուների ֆակուլտետի ռոմանական լեզուների ամբիոնը կազմակերպել էր «Ֆրանսիայի ժամանակակից երգիչները» խորագրով միջոցառում:

Բակալավրիատի 2-րդ և 4-րդ կուրսերի ուսանողները բեմադրեցին մի դրվագ Ֆրանսիայի սրճարաններից մեկում, որտեղ ծավալվում է երիտասարդների զրույցը ֆրանսիական ներկայիս մշակույթի՝ մասնավորապես ժամանակակից երգիչների մասին: Ուսանողները պատմեցին և միաժամանակ երգեցին ինչպես ֆրանսիացի դասականների՝ Շառլ Ազնավուրի, Էդիտ Պիաֆի, Զո Դասենի, այնպես էլ ժամանակակից երգիչների տեղծագործություններից:

Ուսանողներին կատարումներով միացան նաև Ստեփանավանի տարբեր դպրոցներից եկած աշակերտները, որոնք բուհում էին օտար լեզուների ֆակուլտետի հրա-

վերով՝ բուհ-դպրոց համագործակցության շրջանակներում:

Ռոմանական լեզուների ամբիոնի վարիչ Դոնարա Ղազարյանը ողջունեց ներկաներին՝ նկատելով, որ ֆրանսերենն այնքան մեծ տարածում չունի մեր երկրում, որքան նախկինում էր՝ պայմանավորված աշխատաշուկայի պահանջներով և լեզուն աշակերտների ընտրությամբ դարձնելու փաստով:

«Թշնամուն ուզում ենք ցույց տալ, որ հայ ազգը ոչ միայն կռվել, այլև երգել ու պայքարել գիտի»,-նշեց ամբիոնի վարիչը և հավելեց, որ Ֆրանկոֆոնիայի օրերի շրջանակներում կկազմակերպվեն այլ տարաբնույթ ձեռնարկներ ևս:

Հայաստանում Ֆրանսիայի դեսպանի՝ համագործակցության և մշակութային գծով խորհրդական, ՀՊՄՀ դասախոս Ժան Միշել Գասպարյանն արդեն 3 ամիս դասավանդում է Մանկավարժական համալսարանի օտար լեզուների ֆակուլտետում: Միջոցառման ընթացքում նա հպարտացավ իր ուսանողներով, ապա հիացմունքով հավելեց. «Երջանիկ եմ, որ այս սերունդը հետաքրքրված է նաև ֆրանսիական ժամանակակից մշակույթով»:

Սովորելու ցանկություն, պատասխանատվություն և լրջություն ընտրած մասնագիտության հանդեպ. Ժան Միշել Գասպարյանն առանձնացնում է հայ ուսանողի՝ իր համար զարմանալի հատկանիշներն ու կես կատակ-կես լուրջ ավելացնում, որ ֆրանսիացի ուսանողին ստիպում են խոսել, իսկ հայ ուսանողին ճիշտ հակառակը՝ լռել:

Անդրադառնալով միջոցառմանը՝ ֆրանսիացի դասախոսը նկատեց, որ սա շատ լավ ձեռնարկ է ուսանողներին և աշակերտներին միմյանց ծանոթացնելու, նրանց համախմբելու տեսանկյունից. «Մշակույթը երկխոսություն է, ամուր կապ հասարակության տարբեր օղակների միջև»:

ԳԵՂԱՆԿԱՐՉԻ ԱՇԽԱՐՀԸ

ՀՊՄՀ թանգարանի ցուցասրահներից մեկում բացվեց գեղանկարիչ, Մանկավարժական համալսարանի նկարչագծագրական բաժնի շրջանավարտ Հայկազ Սողոմոնյանի կյանքին և գործունեությանը նվիրված ժամանակավոր ցուցադրություն: Օրը նշանավորվեց նաև գեղանկարչին նվիրված հուշ-ցերեկույթով: Միջոցառմանը ներկա էին նրա ընկերները, բարեկամները, անվանի արվեստաբաններ, դասախոսներ, ուսանողներ և դպրոցականներ: Գեղանկարչի ընկերներն ու դասախոսները վերհիշեցին արվեստագետի ստեղծագործություններն ու վաստակը հայ գեղանկարչության զարգացման գործում:

Հայկազ Սողոմոնյանի դասախոս, արվեստաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՊՄՀ դասախոս Մերի Երզնկյանը ներկաներին փոխանցեց իր հիշողություններն ու տպավորությունները ոչ միայն գեղանկարիչ, այլ նաև մարդ, ուսանող, մանկավարժ Հայկազի մասին: Հայ գեղանկարչության մեջ օրվա հերոսի անգնահատելի վաստակի մասին խոսեց նաև քանդակագործ Տարիել Հակոբյանը, իսկ ուսանողական տարիների և բուռն ստեղծագործական կյանքի մասին պատմեց պրոֆեսոր, ՀՊՄՀ դասախոս, Սողոմոնյանի համակուրսեցի Ֆաենբերգ Սարգսյանը:

Հայաստանի ազգային պատկերասրահի գրաֆիկայի բաժնի աշխատակից, արվեստաբան Գոհար Չեմենյանը երկար տարիներ ուսումնասիրել է գեղանկարչի ստեղծագործությունները և կազմել գործերն ամփոփող ծավալուն կատալոգ, թեև անձամբ գեղանկարչին ճանաչելու բախտ չի ունեցել, բայց նրա ստեղծագործությունների միջոցով պեղել ու բացահայտել է նրա գունավոր և միևնույն ժամանակ ինքնամփոփ ներաշխարհը:

Նկարչի քույրը՝ Լուսյա Սողոմոնյանը շնորհակալություն հայտնեց ներկաներին և ասաց, որ եղբայրը աշխատանքներից ոչ մեկը չի վաճառել, հատկապես իմանալով, որ դրանք պիտի դուրս տարվեն Հայաստանից: «Իր մտքում ու հոգում թաքնված մտահոգություններն ու հույզերը նկարիչն արտահայտել է ոչ միայն վրձնի, այլ նաև գրչի միջոցով: Նկարչի վերջին ցանկությունն է եղել ունենալ թանգարան, որտեղ կցուցադրվեն իր 1000-ից ավել ստեղծագործությունները»,- ասաց Լուսյա Սողոմոնյանը:

Ի դեպ, Հայկազ Սողոմոնյանը ծնվել է Երևանում, մասնագիտական կրթությունն ստացել Խ. Աբովյանի անվան Մանկավարժական համալսարանում, որտեղ իր ղեկավարը եղել է մեծանուն հայ նկա-

ռիչ Հովհաննես Զարդարյանը: Մասնակցել է բազմաթիվ ցուցահանդեսների, բացել անհատական ցուցահանդես ավագ գործընկերոջ՝ վաստակավոր նկարիչ Հենրիկ Սիրավյանի քաջալերությամբ, քրոջ վկայությամբ, «Հայոց Մեծ եղեռնին նվիրված գեղանկարներն է ցուցադրել այն ժամանակներում, երբ ուրիշները վախվորած էին արտասանում «հայոց ցեղասպանություն» բառակապակցությունը»:

«Բարև, մենք ենք»

Կուլտուրայի ֆակուլտետի դահլիճում ներկա գտնվեցինք հեռուստառեժիսուրայի 1-ին կուրսի ուսանողների առաջին բեմելուն: Դա ուսանողների քրտնաջան երկու և ավելի ամիսների աշխատանքն էր: Բեմադրող ռեժիսոր, պրոֆեսոր Աիդա Հովհաննիսյանի ղեկավարությամբ ուսանողները ներկայացրին «Բարև, մենք ենք» ներկայացումը՝ հետաքրքիր էպիզոդներով բեմադրելով տարբեր իրավիճակներ:

Բեմադրությունը նվիրված էր ՀՀ անկախության 25-ամյակին, բայց քանի որ վերջին շրջանում երկիրն ապրում է տագնապալի օրեր, փորձ էր արվել ներկայացման բովանդակության մեջ ներառել նաև այս ժամանակշրջանի ապրումներն ու զգացողությունները:

Աիդա Հովհաննիսյանն ուսանողների առաջին ներկայացումը դրական գնահատեց և այն համարեց մեծ քննություն: «Սա այն քայլն է, որից հետո նրանք կամ կսիրահարվեն կամ կհիասթափվեն իրենց մասնագիտությունից: Նրանց »,- ասաց պրոֆեսորը:

Ներկայացման մեջ հաղթական երգերի շարքում «Մարտիկի երգ»-ն է, զինվորներ, որոնք ծնվել են ապրելու և սիրելու համար, բայց կան շատերը, որ ծնվել են և ընտրել մահը՝ ապրեցնելու համար:

Ներկայացումն ավարտվեց հանդիսատեսին ուղղված կոչ-հորդորով՝ «Հայ ժողովուրդ, մեր միակ փրկությունը մեր հավաքական ուժի մեջ է»:

Մարգարիտ Դերանցը ծնվել է է 1956 թ. հոկտեմբերի 16-ին Ստեփանակերտ քաղաքում, ութ տարեկանից ընտանիքի հետ տեղափոխվել է Երևան, հետագայում ավարտել Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը: 2003-ից ներգաղթել է ԱՄՆ և ապրում է Լոս Անջելեսում: 2012 թվականից ԱՄՆ-ի հայ գրողների միության անդամ է, «ՎԵՐՆԱՏՈՒՆ» պարբերականի պատասխանատու քարտուղարը:

ՄԱՐԳԱՐԻՏ ԴԵՐԱՆՑ

ՆՄԱՆԸ ՆՄԱՆԻ ՀԵՏ

Այսօր, Obama Care պատճառով, երրորդ անգամ եմ մտնում դեղատուն, անդամալույծ հորս համար դեղ գնելու: Ոչ հորս առողջապահական քարտը, ոչ բժշկի գրասենյակից ուղարկված հեռահաղորդումը՝ չօգնեցին, երրորդ անգամ հերթ եմ կանգնած հաստատ որոշումով, որ թեկուզ կանխիկ գումարով դեղը գնել: Համակարգիչում հիվանդների բժշկական ապահովագրական տեղեկությունները խառնվել են, և հերթը դանդաղ էր առաջ գնում:

Ինձնից առաջ շիկահեր, սլացիկ բարետես մի աղջիկ էր՝ գլխին վիրակապ, աչքերի տակ կապտուկներ:

- Դուք Գլենդելո՞ւմ եք ապրում,-հարցրեց աղջիկը:

- Արդեն 11 տարի,-պատասխանեցի:

- Ես մեկ շաբաթ է, որ տեղափոխվել եմ Գլենդել… ու այնքան ուրախ եմ: Ասում են Գլենդելը շատ ապահով քաղաք է: Ես ոչ մի կերպ չեմ ուզում վերադառնալ իմ հին բնակարանը:

- Իսկ որտե՞ղ էր գտնվում Ձեր նախկին բնակարանը:

- Down Town- ում, ապրում էի ընկերուհուս հետ: Երեկոյան ուշ սպասում էի նրա վերադարձին: Մանկությանս գիշերային մղձավանջը կենդանություն առավ. դուռը բացեցի, դիմակներով ծպտված երեք հոգի, այնպես հարվածեցին գլխիս, որ ուշաթափվեցի: Բախտս բերել է, որ ընկերուհիս շուտ է վերադարձել…

- Դուք թշնամինե՞ր ունեք,-սարսափած հարցրի ես:

- Օ՜, ոչ… Սովորական բնակարանային կողոպուտ էր,- ավելացրեց հմայիչ անմիջականությամբ:

Աղջկա լազուր, ջինջ աչքերը և անգլերենի սարսափելի առոգանությունը ինձ ստիպեց հարցնել.

- Հաստատ դուք ռուս եք…

- Ո՛չ, ես թուրք եմ, Թուրքիայից…

- Թուրքիայից, բայց ոչ թուրք,-հուսալով, որ սխալ եմ լսել հարցրեցի կրկին:

- Թուրք եմ, ու Թուրքիայից,- մի քիչ փշրված, արժանապատվորեն ժպտալով հաստատեց նա:

Սիրտս սկսեց, արագ բաբախել, գուցե նաև գունատվեցի: Ուզում էի ասել, թե ինչքա՜ն պաշտպանված չէին սեփական հողի վրա, հարազատ տներում հազարավոր հայեր՝ ծերեր, մանուկներ, կանայք թուք բորենիներից, որոնց հոշոտեցին, ծվատեցին, ոչնչացրին… Որովհետև թուրքը որոշում ուներ ոգեղեն մի ցեղի սերմ արմատախիլ անել, իսպառ բնաջնջել երկրի երեսից….

Անսպասելիորեն խոսակցությանը խառնվեց դեղագործ կինը՝գրեթե նույն կերպ ժպտալով, ինչպես թրքուհին:

- Թուրքիայից, բայց հատկապես որտեղի՞ց…

- Իզմիրից, դուք նույնպես թո՞ւրք եք…

- Հայ եմ, և իմ նախնիները հենց Իզմիրից էին, ցեղասպանությունից հետո, փրկվել է միայն մեծ մայրս…

- Ի՜նչ ցեղասպանություն, պատերազմ էր, իսկ պատերազմի ժամանակ միշտ էլ նմանատիպ բաներ են լինում…

Դեղագործ կինը փորձեց հակաճառել նրան, բայց փղձուկը բռնել էր կոկորդը: Դա մի պահ էր:

Իսկ հետո նրանք կախարդված ակնապիշ սկսեցին միմյանց դիտել. հիշողության խորը թանձրակույտից վեր էին հառնում անբացատրելի զգացողություններ, մտապատկերներ, դեպքեր: Երկուսն էլ սթափվեցին թմբիրից:

Թրքուհու հերթն եկավ և ժպիտով հրաժեշտ տվեց մեզ:

Դեղագործը կինը հայերեն ինձ հարցրեց.

- Տիկին, հաստատ եմ, որ դուք վատ զգացիք, որ նա թուրք է…

Ես լուռ գլխով հաստատեցի: Նա էլ ավելացրեց.

- Ես էլ ինձ վատ զգացի, գոնե՜ էդքան աղվորիկ չլիներ…էդ թրքուհին:

Մենք հրաժեշտից առաջ՝ խոսուն, տխուր, կարեկցանքով լի հայացքներ փոխանակեցինք միմյանց:

Ամբողջ օրը մտածում էի դեղատան դեպքի մասին՝ հին, խորը ցավեր կան, որոնք դեռ չեն սպիացել ու ղեկավարում են մեզ, մեր կամքից անկախ…

Բայց ուրիշ մի բան կար, որ ինձ մտքով ետ էր տանում դեղատուն: Ու ես հիշեցի կնոջ ու աղջկա լուռ դիմախաղը՝ նրանք կարծես ծանոթ էին միմյանց անհիշելի ժամանակներից, ունեին տարիքային տարբերությամբ համարյա նույն դեմքն, իսկ լուրթ, անսովոր գեղեցիկ աչքերը լրիվ նույն էին:

Հետընթաց հիշողությունը, որ մարդուն կարող է մեկեն անհաշվելի տարիներով ետ տանել, ճակատագրի խաղ չէ, այլ թելադրանք, որ ինչ որ մեկն առնչվի մի գաղտնիքի, որին ժամանակը ամեն բան ավերելով խնամքով թաքցնում է բոլորից, ընդամենը խոտերում կորած մի նեղլիկ ու անտես արահետ թողնելով:

Արդյո՞ք սա երևակայության խաբկանք է, թե Աստվածային նախախնամության նշան և հանդիպումը պե՛տք է շարունակություն ունենա այս աշխարհում, կամ միգուցե մի այլ ոլորտում, ուր մենք անմեղորեն պատսպարված ենք Աստծո դատաստանից՝ մեծ ու բարեգութ հարկի ներքո, ուր նմանը նմանի հետ է…

ՄՐՑՈՒՅԹՆ ԱՄՓՈՓՎԵՑ

Բանասիրական ֆակուլտետի ուսանողական խորհուրդն ամփոփեց Մայրության և գեղեցկության տոնին նվիրված ներհամալսարանական մրցույթի արդյունքները: Մրցույթի հաղթող ճանաչվեց բանասիրական ֆակուլտետի 1-ին կուրսի ուսանողուհի Անի Ղալաչյանն իր «Արևաշող աղջնակ» ստեղծագործությամբ:

Արևաշող աղջնակ…

Այսօր ես կրկին քո գիրկն եմ գալիս,
Որ նորից շոյեմ բամբակից ճերմակ քո մերկությունը,
Քո անկրկնելի գեղեցկությունը:
Որ հատիկ-հատիկ թերթեմ և սերտեմ
Զգացմունքներիդ բարդ գաղտնագիրը:
Գլուխս դնեմ կրծքավանդակիդ,
Եվ ուշիմ լսեմ սրտիդ թրթիռը:
Երանության մեջ անզուսպ տապակվող
Եվ արևային ջերմության հասնող՝
Քո գաղտնազերծված շփոթությունը:
Վարդից էլ կարմիր քո դեմքի գույնը,
Որ շիկացումի արտացոլում է,
Այրվող կրքերի արտանետում է,
Կայծակ է, բոց է, երկնային շառաչ,
Քողարկված հուր է՝ փոթորկից առաջ…

Օրը հանգչում է…

Գետափին թառած խարխուլ խրճիթից
Հազիվ նշմարվող լույս է երևում:
Եվ մելամաղձոտ մի թախծություն է,
Մեռնող օրվա հետ կարծես երերում:
Անտառի փեշից կախված ծմակը
Դանդա՛ղ շաղվում է վերջալույսի հետ:
Եվ լեռնապարի ամբողջ հմայքը
Խավարի գրկում կորչում է անհետ:
Օրվա հոգսերից հոգնած անտառը
Մարմանդ նազանքով խոր քուն է մտնում,
Վառվող ջահի պես լեռան կատարը
Հանդարտ հանգչում է մթության գրկում:

ՈՒՍՈՒՄՆԱՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ԱՅՑ ՍԵՎԱՆԻ ՀԷԿ

Հայաստանի Հանրապետությունը ռազմավարական առումով ունի անբարենպաստ կարգավիճակ, ինչը հարկադրում է ՀՀ յուրաքանչյուր քաղաքացու լինել առավել զգոն և պատրաստ հաղթահարելու ցանկացած ճգնաժամ: Ստեղծված արտակարգ իրավիճակների պայմաններում մարդկային կորուստներից խուսափելու միակ ճշմարիտ ուղին համապատասխան գիտելիքների առկայությունն է, որը պետք է կրի զանգվածային բնույթ: Տեսական գիտելիքներն անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման են վերջինիս լիարժեք իրականացման համար: Արդ, հարկավոր է ունենալ նաև որոշակի ունակություն՝ միտված ստեղծված պայմաններում ճիշտ կողմնորոշմանը. փորձը բոլոր հնարավոր տարբերակներից ամենաարդյունավետն է, առանց որի դժվար է արդեն առկա խնդիրը տեղափոխել իրական հարթություն և որոնել համապատասխան լուծման ալգորիթմը:

Կարևորելով գործնական ճանապարհով գիտելիքների ամրապնդման եղանակը՝ մարտի 31-ին առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղաքաշտպանության ամբիոնի նախաձեռնությամբ կազմակերպվեց ուսումնաճանաչողական այց դեպի Սևանհէկ, որին մասնակցեցին մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի ֆիզիկա և բնագիտություն մասնագիտությամբ չորրորդ կուրսի ուսանողները: Էքսկուրսիոն այցը ղեկավարում էր նույն ամբիոնի դասախոս, փրկարար ծառայության գնդապետ Պերճ Կարապետյանը: Այցի շրջանակներում ուսանողները հնարավորություն ունեցան հենց տեղում ծանոթանալու Սևան-Հրազդան կասկադի առաջին հիդրոէլեկտրակայանի աշխատանքի սկզբունքին, վերջինիս նշանակությանը, ինչպես նաև արտակարգ իրավիճակներում հնարավոր բոլոր ռիսկերի և իրականացվելիք միջոցառումների ծրագրին:

Ուսանողները տեղեկացան, որ Սևան-ՀԷԿ-ը ԽՍՀՄ-ում առաջին ստորգետնյա հիդրոէլեկտրակայաններից մեկն էր և ներկայումս ունի շատ մեծ ռազմավարական նշանակություն Հայաստանի ողջ էներգետիկ համակարգի համար:

Ուսանողների հերթական այցելությունն ուսանելի էր՝ հատկապես գիտելիքների ամրապնդման, ինչպես նաև կարողությունների և հմտությունների զարգացման առումով:

Նարինե ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ
Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանողուհի

Գլխավոր խմբագիր՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ
էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ
Համարի պատասխանատու՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ asryansilva@gmail.com
Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպագրատանը:
Հասցեն՝ Արշակունյաց 2
Տպաքանակը՝ 1800 օրինակ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է:
Հղումը պարտադիր է: Թերթը չի վաճառվում:
Հանձնված է տպագրության 19.04. 2016 թ.